

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:  
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis, Rédaction «Mschak».

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բայ է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԱՌԱՋԻԿԱՅ 1891 ԹԻՒԱԿԱՆԻՆ

## „ՄՇԱԿ“

### ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Եւ հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մեր կը ստանանք սեփական Հեռագրի Դիմումները:  
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:  
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում, Թամակաձի տանը):  
Կայսերութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:  
Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով: Բառեր վճարվում է 2 կոպեկ:  
«Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմյանց լրագիրների յայտարարութիւնները, մասնաւորապէս և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնաւորապէս տպագրվել առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորս րոպէս վրա՝ 2 ռուբլի:  
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

### ОТКРЫТА ПОДПИСКА

НА ЕЖЕДНЕВНУЮ ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКУЮ ГАЗЕТУ

## „КАВКАЗЪ.“

Въ 1891 году газета „Кавказъ“ будетъ выходитьъ подъ прежнею редакціею и по прежней программѣ, ежедневно не исключая и понедѣльниковъ.

### ПОДПИСНАЯ ЦѢНА:

| Съ доставкою въ Тифлисъ. | Съ перес. по Имперіи.   | По почтовому союзу.      |
|--------------------------|-------------------------|--------------------------|
| На годъ..... 11 р. 50 к. | На годъ..... 13 р. — к. | На годъ..... 18 р. 40 к. |
| „ 1/2 года... 6 „ — „    | „ 1/2 года... 7 „ — „   | „ 1/2 года... 10 „ — „   |
| „ 3 мѣсяца. 3 „ 50 „     | „ 3 мѣсяца. 4 „ — „     | „ 3 мѣсяца. 6 „ — „      |
| „ 1 мѣсяцъ. 1 „ 50 „     | „ 1 мѣсяцъ. 1 „ 75 „    | „ 1 мѣсяцъ. 2 „ — „      |

Подписка принимается исключительно въ конторѣ редакціи, Тифлисъ, Пушкинская. домъ А. Бабаханова.  
Для иногороднихъ адресоваться: Тифлисъ, въ редакцію газеты „КАВКАЗЪ“.  
Объявленія изъ Москвы, С.-Петербурга, Царства Польскаго, Остзейскаго края и изъ-за границы принимаются исключительно въ центральной конторѣ объявленій, бывшей Л. Метцль, въ Москвѣ, Мясницкая, домъ Смирдонова.  
2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտարարում է ընդհանուր գիտութեանը, որ ներկայ 1890 թվի նոյեմբերի 18-ին, կիրակի օր, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, առաւօտեան 9 ժամին կայանալու են Գուժայի երրորդ կարգի ձայնարների ընտրութիւնները, առաջինը 1891—1894 քառամեակի համար:

### ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

Նոր քաղաքային հարկ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Կովկասեան ցուցահանդէս Պարիզում. Ներքին թշնամի. Նամակ վարդաշէնից. Նամակ Ալեքսանդր Բուլղակովի. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Մի փոքրիկ դէպք. Արտաքին լուրեր.—ԽԱՌԻՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՏԵՂԵԿԱՅԻՆՈՅ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

### ՆՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՐԿ

Լրագիրները որպէս լուր հաղորդում են, որ դիտարկութիւն կայ Թիֆլիսում նոր քաղաքային հարկ մտցնելու, այն է բնակարանների վարձը հարկատուութեան ենթարկելու:  
Մի և նոյն ժամանակ լուր կայ, որ այդ հարկը շատ ծանր է լինելու, այն է 10% բնակարանավարձից: Ուրեմն այն մարդը, որ իր բնակարանին տարեկան 500 ռուբլի է վճարում, կը հատուցանի քաղաքին 50 ռուբլի տարեկան հարկ: Դա, մեր կարծիքով չափից դուրս ծանր հարկ է: Թէև հաղորդում են, որ 300 ռուբլուց պակաս բնակարանի վարձ տուողները ազատ կը լինեն նոր քաղաքային հարկից, բայց ուրիշ կողմից ոչինչ չէ ամփած արդեօք 300 ռուբլուց աւելի բնակարանի վարձ տուողը, դիւրեւ 500 ռուբլի վճարողը, ամբողջ հինգ հարկից կը վճարէ իր 10 պրոցէնտը, թէ միայն այն դուռնարից, որը աւելանում է հարկից ազատ մնացող երեք հարիւր ռուբլուց, այսինքն միայն 200 ռուբլուց: Անկասկած այդ տեսակ սխառման անհամեմատ աւելի արդար կը լինէր, եթէ 300 ռուբլի բնակարանի վարձ վճարողը ազատ պիտի

լինի հարկից, ուրեմն արդարութիւնը կը պահանջէր որ այն բնակարանատէրը, որը 300 ռուբլուց աւելի է վճարում, 10% քաղաքային հարկ վճարէր միայն այն դուռնարից, որը 300 ռուբլու վրա աւելանում է և ոչ թէ ամբողջ դուռնարից: Օրինակ իր բնակարանի համար 1000 ռուբլի վճարողը իսկապէս պէտք է հարկ տար ոչ թէ ամբողջ 1000 ռուբլուց, այլ միայն 700 ռուբլուց, քանի որ 300 ռուբլի վարձը հարկից ազատ է յայտնված:  
Իսկ եթէ բնակարանի վարձից պահանջելի հարկը ճշմարիտ 10% է լինելու, դա չափից դուրս ծանր հարկ կը լինի և այն պատճառով, որ հարկատու, այնուամենայնիւ, ոչինչ ընտրողական իրաւունքներ չի վայելի քաղաքային ընտրութիւններէ ժամանակ: Դա, կրկնում ենք, կը լինի մեծ անարդարութիւն...

Երևակայեցէք մի օր և է մանրամասն, որը քաղաքային վարչութեանը վճարում է տարեկան 2 ռուբլի 50 կոպեկ, նա համ ընտրող է, համ էլ իրաւունք ունի Գուժայի ձայնարներ ընտրելու ու վճարել քաղաքային գործերը, իսկ բնակարանի վարձից 10% վճարող քաղաքացին, դիւրեւ 40 կամ 50, նոյն իսկ 100 ռուբլի տարեկան հարկ վճարողը զրկված կը լինի որ և է ընտրողական իրաւունքից:

Երկուսից մէկը, կամ պէտք է շատ անհշան հարկ նշանակվի բնակարանի վարձի վրա, եթէ հարկատու զրկված պէտք է լինի քաղաքային ընտրողական բոլոր իրաւունքներից, կամ եթէ ճշմարիտ 10% հարկ պիտի նշանակվի բնակարանի վարձի վրա, այն ժամանակ արդարութիւնը կը պահանջէր քաղաքային այդ նոր և շատ խնդր հարկատուներին նմանապէս շնորհել

այն բոլոր ընտրողական իրաւունքները, որ վայելում է տարեկան մի ռուբլի, կամ ռուբլի ու կէս վճարող վերջին մանրամասն է:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ԿՈՎԿԱՍԵԱՆ ՏՈՒՑԱՀԱՆՐԻՍ ՊԱՐԻԶՈՒՄ

Ֆրանսիական «Revue Française de l'étranger et des colonies» ամսագրի նոյեմբերի տետրակում գտնում ենք մի յօդուած այն կովկասեան արդիւնագործական հարուստ ցուցահանդէսի մասին, որ կազմել է Պարիզում պ. Վիկտոր Թիէբո:

Այդ ցուցահանդէսը նպատակ ունի ծանօթացնել Ֆրանսիայի արդիւնագործներին և կապիտալիստներին կովկասի բնական հարստութիւններին հետ և դրանք նրանց դէպի մեր երկիրը: Մինչև այժմ եւրոպացի տուրիստները (ճանապարհորդները) զննվում էին մեր երկրի տեսարաններով միայն, այժմ ժամանակ է արդէն, որ եւրոպացի արդիւնագործները ձեռնարկէին մեր երկրի հարստութիւնների մշակութեան գործին:

Պ. Թիէբո երկար ժամանակ կովկասում ապրելով ծանօթ է մեր երկրին և անցեալ ձմեռվայ ընթացքում նա մեր երկրի բնական հարստութիւններին մասին հրապարակական դասախոսութիւններ կարդաց Պարիզի արդիւնագործական և առևտրական ազգային սկադէմիայում:  
Պարիզի կովկասեան ցուցահանդէսը աչքի է ընկնում մեր երկրի բնական հարստութիւնների ճոխ ժողովածուով, այդտեղ հանդէս են գրված մեր երկրի հանքային նմուշները, փայտի տեսակները, գիւղատնտեսական ամեն տեսակ արդիւնաբերութիւնները և բերքերը, չորամր, զինին, բուրդը, նաւթը, նմանապէս մեր այլ և այլ գործուածքները:

Պ. Թիէբո կազմած ունի կովկասի արդիւնագործական քարտէշ, որը նոյն տեղում հանդէս է դրված:

Այդ ցուցահանդէսը մշտական պիտի լինի:

### ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՍԻ

Հայ ազգն ունի զանազան թշնամիներ, որոնք բազմաթիւ արդեւներ են յարուցանում նրա բնական զարգացման առջև: Բայց այդ թշնամիներից ամենամեծագույնը թաղկած է նոյն իսկ հայի բնաւորութեան մէջ, բնակվում է նրա արեւելի կամքիներին մէջ: Ճանաչում էք նրան... Դա հայի նախնան է: Դա ինչպէս է սկսվում մեր մէջ որ և է օգտակար գործ, որը կարող է ոյժերի միւլութեան:  
Հիմնվում է մի օր և է ընկերութիւն: Նպատակը գովել է, նւթական միջոցներ կան, ընդունակ զեկալարներ կան, բայց գործը կանգ է առնում ինչու...  
Մի խումբ երիտասարդներ կամենում են ներկայացումն առաջ Բեմ կայ, ժողովուրդ կայ, լազացայներ կան, բայց ներկայացումը դուրս չէ գալիս: Ինչու...  
Մի երիտասարդ կամենում է կիրակեայ դրուրոց բանալ Պահանջը մեծ է, երիտասարդը հասկանում է գործը, նա ունի շատ ընկերներ, որոնք կարող են օգնել նրան, բայց նպատակը չկարողանում: Ինչու...  
Իր ամբողջ կեանքը հասարակաց գործունէութեան մէջ անցրած, մեծ արդեւները յաղթելուց յետոյ նոր գործիչներին համար ճանապարհ բացած կը գործիչին երախտը: Գոյց տալու համար կամենում են յօրեկան տօնից Բայց ահա անսպասելի արդեւներ են առաջ գալիս, դժուարութիւններ են յարուցվում: Ինչու...  
Մի երիտասարդ կամենում է կիրակեայ դրուրոց բանալ Պահանջը մեծ է, երիտասարդը հասկանում է գործը, նա ունի շատ ընկերներ, որոնք կարող են օգնել նրան, բայց նպատակը չկարողանում: Ինչու...  
Իր ամբողջ կեանքը հասարակաց գործունէութեան մէջ անցրած, մեծ արդեւները յաղթելուց յետոյ նոր գործիչներին համար ճանապարհ բացած կը գործիչին երախտը: Գոյց տալու համար կամենում են յօրեկան տօնից Բայց ահա անսպասելի արդեւներ են առաջ գալիս, դժուարութիւններ են յարուցվում: Ինչու...

Մի օր և է բարձրագոյն զարգացում ուսանում են մի խումբ հայեր: Նրանք երկար տարիներ միմեանց փոխադարձ սէր են ցոյց տալիս, միմեանց ոգևորում են ազնիւ զաղափարներով, միմեանցից չեն բաժանվում: Բայց նրանցից մէկը յանկարծ մի փեղեկի վէպ գրեց: Եւ ահա նա սկսում է զգալ, որ իր ընկերները սառչում են նրանից, այլ ևս չեն սիրում նրան, փոքր առ փոքր հեռանում են նա նրանից... Ինչու...  
Ներկար տարիներ գիտութիւնը ուսումնասիրելուց, լայնատարած մտաւոր պաշար պատրաստելուց, կենսից սկզբունքները հետ ծանօթանալուց յետոյ յայտնվում է մի հայ և պահանջ տեսնելով հիմնում է մի լրագիր, որով կամենում է նպաստել ազգի մտաւոր առաջադիմութեան: Նրա հետ միասին պատրաստվում էին և ուրիշները, որոնք այժմ փառաւոր կերպով կարող էին օգնել իրանց նախկին ընկերոջ: Բայց ահա նրանք մեծակ են թողնում իրանց ընկեր-գործիչին և հեռանում: Ինչու...  
Բոլոր վերոյիշեալ երևոյթիները պատճառը մի և նոյնն է... Հայը ունի մի զօրեղ ներքին թշնամի, որը կոչվում է «հայկական նախնա»: Այս թշնամին իր ոյժը ցոյց է տալիս իւրաքանչիւր բողբ և իւրաքանչիւր քայլափոխում, որովհետեւ որպէս մի բարոյական «թոյն» տարածված է մեր արեւելի մէջ: Նրանով շատ անգամ թունաւորված են լինում հայ բանուրը, հայ վաճառականը, հայ ուսանողը, հայ ուսուցիչը, հայ հոգեւորականը, հայ հրապարակագործը...

Յիշեալ թշնամու դէմ պիտի մաքառէ իւրաքանչիւր հայ, մանաւանդ՝ դաստիարակը, հոգեւորականը և հրապարակագործը:

### Ս. Թ.

### ՆԱՄԱԿ ՎԱՐՉԱՇԵՆՑ

Նոյեմբերի 10-ին

Վարդաշէնը ունի մօտ 900 տուն բնակիչ, որոնցից 300 տունը հայադաւան, 250 տուն յունադաւան ուղիւսներն են, 300 տուն հրէաներ և 50 տուն էլ թուրքեր:

Ահա երկրորդ ամիսն է, որ այստեղ սաստիկ կոտորածներ է անում բեկացաւ երեխաների մէջ: Այդ տարախոսիկ հիւանդութիւնը սկսվեց հրէաների թաղից, որոնք չը նայելով ոստիկանական խիստ պահանջներին, դարձեալ սաստիկ կեղտոտ են պահում թէ փողոցները և թէ տները: Դժուրին վաղահաս ցրտերի, այդ հիւանդութիւնը վերջին օրերս մեղմացաւ, իսկ առաջին օրերը ամեն օր մեռնում էին մի քանի երեխաներ, զլիսաւորապէս 1-12 տարեկան հասակի: Նույնպէս եկած բժիշկը ոչինչ օգնութիւն չը կարողացաւ հասցնել և ինչ օգնութիւն կարելի է սպասել այն տեղում, ուր ծնողները բոլորովին ուշադրութիւն չեն դարձնում հիւանդ երեխաների վրա, որոնցից շատերը ուռած բեկբով, առանց որ և է փաթակի ման են գալիս փողոցներում: Վարդաշէնի քրիստոնեայ հասարակութիւնը դժգոհ է տեղացի հրէաներից, որովհետեւ ամեն տեսակ հիւանդութիւն սկսվում է նրանց թաղից և անցնում է մնացած թաղերը:

Վարդաշէնի բաժնի ղեկավարական միջակահանութիւնը վերջացաւ ամսիս 6-ին: Զինուորական բժիշկ Պ. Մանուկեան առաջարկութեամբ Նույնու գաւառապետը անհրաժեշտ համարեց Վարդաշէնում հիմնել հիւանդանոց և դեղատուն: Ժողովուրդը պարտաւորվում է միայն բժիշկին տալ բնակարան և այն առ ժամանակ մի քանի տարով: Ժողովուրդը մեծ ուրախութեամբ ընդունեց այդ գաւառապետի առաջարկութիւնը և անմիջապէս մարդիկ ընտրեց, շուտով հոգալու բժիշկի բնակարանի մասին: Յուսալի է թէ առաջիկայ դարձեցի Վարդաշէնը կուսակալ իր սեփական բժիշկը և հիւանդանոցը: Նոյնաման մի հիմնարկութիւն ուղում է հաստատել պ. գաւառապետը գաւառի յարմար համարված գիւղերից միում:



Արդենաւէտ շերամագործներն չորսով վարդաշէնում կան չորս գործարաններ: Առաջ այդ գործարաններում միայն թել էին քաշում բոժոժից, իսկ այժմ չորս տարի է ահա, որ մանում էլ են: Այդպիսով գործելու նիւթը բոլորովին պատրաստ արտադրանքում են գլխաւորապէս Մոսկովա: Այդ գործարաններում աշխատում են 100-ից աւելի բանուորներ զանազան հասակի և միայն արական սեռից: Աշխատանքը սկսում է առաւօտեան վեց ժամից և տևում է մինչև երեկոյան 6½ ժամը: 12-ին կէս ժամ հանգիստ է տրվում: 12—15 տարեկան երեխաները օրական ստանում են 10—15 կօպէկ, իսկ մեծերից ունենք ամսական 20 ռուբլի: Այդ գործարանների աշխատանքը, բացի մէկից, դադարում է մայիս, յունիս և յուլիս ամիսներին: Վարդաշէնում կայ նաև օրինակների շերամագործների առանձին ճիւղը, որի օգուտներն անուրանալի են, քանի որ նա գործնական օրինակից զատ, բնակիչներին տալիս է ընտիր և էփան սերմ:

Յիշենք և Վարդաշէնի մի հրաշալիքը՝ հակայամարմին, դարաւոր կաղամախին, որի արմատի հաստութիւնը 32, իսկ բնի հաստութիւնը 23 արշին է: Թէև ժողովուրդը մեծ ատելութեամբ է վերաբերվում դէպի անտառը, բայց դեռ կը նկատէր Վարդաշէնում իրանց խորտոթեմքը այրեցեալ գոտին յիշենով ծառեր, որոնք անձեռնմխելի են մնում լոկ այն պատճառով, որ ժողովուրդը այդպիսի մեծ ծառերին սրբի նշանակութիւն է և յարգանք է մատուցանում:

ՆԱՍՏԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎՈՒՅ

Նոյեմբերի 10-ին

Ահա մի քանի օր էլ կանցի և ձիւնը կը ծածկէ ամբողջ Շիրակի դաշտերը: Մեր գիւղացիք, որոնք վաղուց աւարտել են իրանց երկրագործական-դաշտային պարապմունքը, կը մնան անգործ: Այս մեր շինականները ամբողջ ձմեռը անցնում են անդորովեմամբ: Նրանք այս կամ այն անձի գոմի «օւղայում», նրանք օրերը անցնում են «հէփլաթ» ու «նաղը» ասելով, սրան, նրան բամբակույ: Թէ որքան չարիք առաջ է գալիս այդ ձմեռային անգործութեան շնորհիւ, այդ շատ լաւ յայտնի է: Անգործ մարդն ինքն ըստ ինքեան շինական է, ուր մնաց մեր շինականները, որոնք զօրկ են նաև ուղիղ դատելուց: Եւ ահա տեսնում ես, որ իրանց հին վրէժները, հին դատերն ուղղում են մաքրել ձմեռը, որտեղ առաւօտից մինչև երեկոյ բարձրաւ են և ազատ կեբայով կարող են միմեանց հայտնել, միմեանց քիթ ու պոռնոջ ջարդել...

Բայց այդպէս չեն խելացի երկրագործները: Նրանք գիտեն արհեստ և այդ արհեստը եթէ չեն կարող գործ դնել զարման, որը վար ու ցանքի ժամանակ է, նրանք գործ են դնում ազատ և ապահով ձմեռը: Նրանք տաք և կանօնաւոր շինական բնակարանում (որը նոյնպէս խելացի կեանքի և արհեստի արդիւնք է), կը տեսնեն՝ որը մուշտակ է կարում, որը կօշիկներ, որը հիւսն է և շինում է փայտից սիւղաներ, աթոռներ, մահճակալներ, անօթներ և այլն, որը ծղոտից և ուռիից հիւսում է քիթներ, գլխարկներ: Աւելի խելահաս երկրագործներ կան, որոնք գիտեն կաշեգործութիւն, երկաթագործութիւն, զինագործութիւն և այլ շատ օգտակար, պիտանի և ազնիւ արհեստներ:

Բայց, գիբաղաբար, մեր շինականների մէջ արհեստներ և արհեստաւորներ չը կան, կամ լինում են շատ աննշան բացառութեամբ: Արհեստ չը գիտենաւոր պատճառով մեր գիւղացին զօրկ է կանօնաւոր բնակարան ունենալուց, զօրկ է պատշաճաւոր հագուստից (թէև նա հագուստի վրա աւելի փող է ծախսում), զօրկ է երկրագործական կատարելագործված գործիքներից, զօրկ է մարդավայել ապրուստից, զօրկ է նիւթական միջոցներից: Նրա տունը գիտնաւոր է, սենեակները մութ և ձիւտ, նրա խոլը դիւակաւն աշխատութեամբ հաց է թխում լինովի՝ ասլած հորը մէջ, որը ծառայում է որպէս վառարան, նրա հագուստը անձն և անկանօն է, ձմեռ ժամանակ նրա հագին մուշտակ չը կայ, չը նայելով որ ոչխարի կաշին փոտում է մարագի կամ գոմի անկիւններում, նրա ոտներին հում կաշուց շինած արեխ է, որը ձիւնի և ցեխի մէջ թրջվում, լինում և սկսում է ջուր ներս քաշել:

Մինչդեռ եթէ մեր գիւղացին սէր ունենար դէպի արհեստը, դէպի արհեստագիտութիւնը՝ նա

շատ անգամ աւելի լաւ, աւելի ազնիւ, աւելի ապահով կապրէր:

Ամբողջ Շիրակի մէջ միայն մի գիւղ կայ, որը ունի բազմաթիւ արհեստաւորներ. դա Արդիկ գիւղն է: Արդիկ գիւղը գտնվում է քաղաքից հիւսիս-արեւելեան կողմում, ունի 400 տուն բնակիչ: Արդիկ գիւղի բնակիչները գաղթած են թիւրքաց Հայաստանից 1828 թվին: Նրանք կարենի շրջականերից են և յատկապէս Օվազ գիւղից: Որպէս կարնեցիներ նրանք գիտեն մաքուր հայերէն խօսել, գիտեն մաքուր ապրել, գիտեն քաղաքավարութիւն, որից զօրկ են Ալաշկերտի և Մուշի գիւղացիք, գիտեն խելացի երկրագործութիւն, և որն ամենազինաւորն է՝ գիտեն արհեստ: Այդ գիւղը 1830 թվին ունի 55 տուն, 1860 թվին՝ 180 տուն, իսկ այսօր ունի 400 տուն: Հասկանալի է որ ժողովրդի բազմաթիւ ճեղքեալ Յոյեմից հողը, ընդհակառակը հանգուցեալ Յոյեմի ա. ք. հ. կոտանանից խելացի արդիւնքներից հողերը և յատկապէս Հատիճի վանքին: Այդպէս զրկված արդիւնքը սկսեցին հողագործութեան հետ զբաղվել նաև արհեստով: Եւ այժմ թէև նրանք չունեն բաւական ազատ հողեր, չունեն արտադրողներ, չունեն անսանապահութիւն, կաթնագործութիւն, բայց ունեն արհեստ, և այդ արհեստի պատճառով ապրում են անկախ և ապահով:

Նրանի թէ մեր գաւառի հարկւարուր գիւղերը և գիւղացիները օրինակ առնէին յիշեալ գիւղի բնակիչներից, և սովորէին արհեստը, որը շատ պիտանի և շատ օգտակար է մանաւանդ ձմեռային ազատ օրերում: Մամուլի ձայնը լսելի չէ մեր ժողովրդի ամեն խաւերում, այդ դէպքում պէտք է հոգ տանեն գիւղական ուսուցիչներն ու քահանայները, նրանք պէտք է բացատրեն անուս ժողովրդին անգործութեան վնասակարութիւնը և արհեստի հրաշալի օգուտները:

Շիրակեցի

ՆԵՐՍԻՆ ԼՈՒՐԵՐ

Հինգշաբթի, նոյեմբերի 15-ին, կէսօրից յետոյ, հասաւ Թիֆլիս կովկասեան կառավարչապետի օգնական, կոմս Տառնիշչիկ իր ամուսնու հետ և իշաւ պալատի հիւսիսային մասում: Նոյն օրն այցելեցին կոմսին՝ ինքն պ. կառավարչապետը, նախնազարկուր, քաղաքապետը և ուրիշ բարձրաստիճան անձինք:

Հաստատ արդիւնքներից լսում ենք, որ բժշկապետ Սամսոն Մայսուրեանց այս օրերս ուղևորվելու է Թիֆլիս Բերլին՝ թրքախալի դէմ կօխի նոր գտած դեղն ուսումնասիրելու նպատակով: Ուրախալի է, որ և մեր բժիշկները յետ չեն մընում միւս երկիրների բժիշկներից այդ գիւտի ուսումնասիրութեան գործում, որպէս զի մեզ էլ չը զրկեն այդ մեծ գիւտի բարերար ներգործութիւնից:

Տեղական լրագրիները հաղորդում են, որ եկող 1891 թվից Թիֆլիսի մէջ դիտաւորութիւն կայ մտնելու մի նոր քաղաքային հարկ, այն է բնակարաններից վերցվող հարկը, որը քաղաքին պիտի տայ մօտ 100,000 ռուբլի: Երբեք իրագործվի այդ հարկը, դիտաւորութիւն կայ վերցնել բնակարանների վարձից 10/0 սակայն տարեկան 300 ռուբլուց պակաս բնակարանի վարձ տուողները ազատ կը մնան վերոյիշեալ հարկից:

«Новое Обозрение» լրագրի հաղորդում է, որ Բուխարայից մի քանի բժիշկներ են գում Բերլին, կօխի գիւտն ուսումնասիրելու համար: Այդ բժիշկներն ուղարկվում են Բերլին Բուխարայի հիւանդանոցի ղերկիւտօր պ. Տօկուրիայի առաջարկութեամբ և իշխան Նիկոլայ Մինգրիկովու ծախսով:

Թիֆլիսի քաղաքապետը խնդրամտոյց է լինում պատշաճաւոր իշխանութեան մօտ՝ թող տալ քաղաքին 1,300,000 ռուբլի գումարի նոր քաղաքային փոխառութիւն անելու:

«Тифлис. Листок» լսել է, որ Թիֆլիսում այս օրերս վախճանված Ստեփան Յարութիւնեան Տէր-Ստեփանեան, անգաւակ լինելով, թողել է կտակով իր կնոջը և պառաւ մօրը աւելի քան 150,000 ռուբլու արժեցող կաթեր, որոնց և կամուր նրանք պէտք է ցը մահ վայելին, իսկ նրա

րանց մահից յետոյ հանգուցեալի ամբողջ կարողութիւնը պիտի անցնի Թիֆլիսի Ներսիսեան դպրոցին:

Լրագրիները հաղորդում են, որ ծովային զօրանոցը Սևաստոպոլում կատարելապէս այրվեց: Քաղաքը և շրջականերն արդէն ձիւնով են ծածկվել:

Հրատարակվեց պրօֆէսօր Անդրէեւիկովու խմբագրութեամբ Պետերբուրգում ռուսերէն լեզուով լոյս տեսնող «Բոկոհատուր» էնցիկլօպեդիական բառարանի Ար. տաւերով սկսվող բառեր պարունակող երրորդ մասը: Այդ մասում, ի միջի այլոց, կան՝ Արմէնիայի, նրա գրականութեան, պատմութեան, եկեղեցու մասին յօդուածներ, ապա Արարատ սարի մասին յօդուածը, Արիտակէս եպիսկոպոս Սեդրակեանի կենսագրութիւնը և հայերէն վերաբերեալ ուրիշ յօդուածներ և կենսագրութիւններ:

Յիշենում ենք Թիֆլիսի հասարակութեանը, որ այսօր, չաբաթ օր, նոյեմբերի 17-ին, կայանաւոր է՝ Թիֆլիսի խորտաբանում հայ երգչուհի օրիորդ Գեոքչեանի կօնցերտը:

Ինչպէս հաղորդում է «Гражданин» լրագրի, Գրեգորեանում հրատարակվել է մի նոր վիպասանութիւն՝ «Die kinder des Kaukasus» վերնագրով, որի նիւթը վերցրած է Կովկասի կեանքից:

Գալ տարի, այն է 1891 թվի փետրվարի 19-ին լրանում է Ռուսաստանում ճորտութիւնը ռճնաւցնելու 30 ամեակը: Ինչպէս յայտնի է, այդ օրը եղել է 1861 թվի փետրվարի 19-ին: Մի քանի քաղաքներում, ինչպէս երևում է լրագրիների հաղորդած լուրերից, պատրաստվում են այդ 30-ամեակը յանգեցնելու քաղաքագործական զանազան ձեռնարկութիւններով:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Այս տարի տարօրինակ եղանակներ է անում այստեղ. սեպտեմբերի 8-ին եկած ձիւնը հալվելուց յետոյ, մինչև ներկայ նոյեմբերի 10-ը կատարեալ զարմանալի եղանակ էր անում: Ուրիշ տարիներ մինչև այդ ժամանակ սարսափելի ցուրտ էր տիրապետում: Ի նկատի առնելով անասունների կերպիւրի պակասութիւնը՝ օդի այսպիսի դրութիւնը կատարեալ բարիք էր: Ամսիս 10-ից ձիւնը նստեց և կանօնաւոր ձմեռ սկսվեց: Այս տարի կենսական պիտոյքները՝ առաւ և էփան են: Ուրիշ կողմից այստեղ մանուկների մէջ շատ տարածված է դիֆտերիա և մեծ զոհեր է տանում: Ռուսաստանի մանուկների մի մասը բացակայ է այդ տկարութեան պատճառով: Մեր անցեալ տարվայ հիւրը՝ ինֆլուենցան, դեռ ևս կատարելապէս չէ թողել մեզ»:

ԵԿԱՏԵՐԻՆՍՈՒՐԻՑ մեզ գրում են. «Ամսիս 5-ին վախճանվեց ամբողջ քաղաքից յարգված երիտաւորը վարդան Պապեան, որը մաթեմատիկայի ուսուցիչ էր տեղիս Մարիինսկի ինստիտուտի մէջ: Նա Լազարեան ձեռնարանի սաներիցն էր և ապա աշուղթեմամբ աւարտեց իր ուսումը Մոսկովայի համալսարանի մաթեմատիկական բաժնում: Հանգուցեալը 28 տարեկան էր և նրա մահը անմիջապէս թողեց իր աւելադր հօրը և ջահիլ նշանածին: Յուդարկաւորութեանը, ամսիս 8-ին, ներկայ էր մեծ բաղմունքիւն թէ հայերից և թէ ռուսներից»:

Մեզ հաղորդում են ԲԱԹՈՒՄԻՑ, որ գործերը այս քաղաքում շատ անմիջապէս դրութեան մէջ են: Ռուսաց փողի կուրսի բարձրանալու պատճառով նախը ալ ևս զրկվել է արտահանվում եւրօպա, այդ պատճառով փողի մեծ պակասութիւն է դգացվում Բաթումում, հեռանալէս և առևտուրն էլ, առհասարակ զրկվել կատարելապէս կանգ է առել: Քաղաքը մի տեսակ թմրած դրութեան մէջ է գտնվում:

ՇԱՄՍԱԼԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Մի երկու չաբաթ սրանից առաջ, երկուշաբթի դէմ, հայ վաճառականները սկսեցին իրանց խանութները փակել սովորականից վաղ: Ըստ նրանումն էր, որ երկու զանազան թաղերում բնակվող թուրքերը, իրար հետ հաշիւ ունենալով՝ վէճը հասցրել էին վերաւորանքի և կուռի Հայերն այդ սովորական տաճարութիւններից ազատվելու համար, շատ պով փակում էին իրանց խանութները և իրանց տներն էին հեռանում, երբ ոտսիկանութիւնը մեծ

դժուարութեամբ կարողացաւ դադարեցնել թուրքերի մէջ ծագած կռիւը: Սակայն նոյեմբերի 6-ին նորից կրկնվում է թուրքերի իրար դէմ կռիւը և թուրքերի երկու խմբեր հէնց բազարում յարձակվում են միմեանց վրա և սկսում են նախ բռնուցներով և ապա ատրճանակներով և դաշին, ներով միմեանց վիրաւորել: Բարեբաղդաբար այս անգամ մահվան դէպքեր չեղան, միայն մի տասն հոգի վիրաւորված էին, որոնցից մինը ծանր կերպով»:

Մեզ գրում են ՇԱՄՍԱԼԻՑ հետեւեալը. «Շաբաթ տեղացող անձերների պատճառով մի քաղաքի փողոցների ցիւրը անտանելի է դարձել: Փողոցները, կամ գոնէ նրանց մեծ մասը սառչապատակված չեն: Այդ մասին հոգացողը կայ Առհասարակ Շամախի քաղաքը առողջապահական կողմից անխնամ է թողված»:

Մեր թղթակիցը գրում է մեզ ՇԱՄՍԱԼԻՑ որ այդ քաղաքի հայերի և թուրքերի յարաբերութիւնը, ներք, ընդհանրապէս, բարեկամական են: Սակայն ինչպէս երևում է, այդ երկու տարբեր բաղում են միմեանցից կղզիացած: Պէտք է աւելացնել, ասում է թղթակիցը, որ Շամախու թուրքերը մեծ յարգանքով են վերաբերվում դէպի տեղացի հայեր: Շամախու աչքի ընկնող թէ կապիտալիստների թէ տէրութեան պաշտօնեաները՝ մեծ մասը հայերն են:

Լեհական «Գլոս» լրագրին Պոզնի նահանգի գրում են, որ այնտեղ շատ տեղերում մշակ դաս օրական աշխատանքի վարձը չափազանց ստոր կանգնած: Թղթակիցը աւելացնում է, որ կան տեղեր—և այդպիսի տեղերի թիւը շատ է,—որ 15 ժամաշափ աշխատութեան համար մշակ բանուոր ստանում է օրական 7½ կօպէկ, այսինքն 1½ կօպէկ մի ժամաշափ ծանր աշխատութեան համար: Թուրքի այդ տեղերի անունները, թղթակիցը բերում է օրավարձի միջին գները տարբեր զանազան եղանակներով համար: Ձմեռը՝ 6 կօպէկից մինչև 15 կօպ. գարնանը՝ 7½-ից մինչև 10, ամառը և աշնանը՝ 15—30 կ: Հազը դ հաղապիւր բան է, աւելացնում է թղթակիցը: Հազը, ասում է նա տղամարդկանցից՝ ու հայրուստը—և նա կը պատասխանէ. «Ն ովոր շատ հաց ունի, ում մօտ հացը առաւ է»:

Ջարմանալի չէ, եթէ գտնվելով այդպիսի ծանր տնտեսական պայմաններում տեղեկան գիւղացի ազգաբնակիչները, թողնելով իր հայրենիքը՝ վճռում է ամեն նեղութիւններ յանձն առնելով զինել ամենահեռու պայմաններում: Ամերիկայի Մարաքաղաքի լրագրիները հաղորդում են, որ Լեհական թագաւորութիւնից և Բալտեան ծովի մօտ գտնվող նահանգներից ամենամեծ զրկուրութիւններով անցնում են սահմանը օրից օր գաղթականների ամբողջ խմբեր: Ամերիկայում բաղմունքները համար:

Ստացանք յօդուտ օր. Սոմանի, պ. Սաղի Յարութիւնեանից ձեռքով 6 ռուբլի, որոնցից 7 ռուբլի է Մարգար Կիրակոսեան, 2 ռ. թղթան Մակարով, իսկ 1 ռ. Խասակ Կանգուրեան: Անցեալ 141 ռ. գումարի հետ միասին՝ անտ 147 ռուբլի:

Թիֆլիսի Բարոսակայա և Լօրիս-Մէլքիսեդէկ փողոցների անկիւնում գտնվող Մարիինսկի դեղատան բաղից հոսում է միշտ տրօտուարի վրա գարշահոտ և սևագոյն ջուր, այնպէս որ տրօտուարով անցնողները միշտ զղջանալով են անցնում այդ բաղի դրան առջև: Ուշադրութեան արժանի է որ պ. Մարիինսկի ինքն համալսարանի Գումայի ձայնաւոր է և շատ անգամ մանաւանդ է քաղաքիս առնիւտաւ կան յանձնաժողովներում մասնակցելու, և ուրիշների բաղերը մաքրել տալու, պ. Մարիինսկի աւելի լաւ կանէր եթէ մաքրել տար իր դեղատան բաղը անասելի կեղտից և ազատէր հարեաններից ու փողոցում անցնողներին անհրաժեշտից զարչաւորութիւնից:

ԿԱՐՍԻՑ, նոյեմբերի 11-ից, մեզ գրում են. «Անցեալ դիւրը անպայտ գողեր մտնելով տեղիս հայոց օրիորդաց ուսումնարանը, գողացել էին ձեռագործի բոլոր նիւթերը: Գողերը մինչև այժմ գտնված չեն»:







Նոյեմբերի 17-ին, շաբաթ օր, Թիֆլիսի Ժողովարանում, լինելու է  
ՕՐ. ԳԵՆԶԵՆԻ  
**ԿՈՆՑԵՐՏԸ**  
Մանկավարժական և Բանասիրական և պ.պ. Նահապետյանի և Պետրոսյանի:  
Սկզբը կը լինի ժամը 8 1/2-ին: Ցանկանալով վաղորդեց կարելի է ստանալ Ծառուբեանի  
խանութների խանութում, իսկ կոնցերտի օրը կուրբի շվեյցարից:

2—2

ՇՈՒՇՈՒՄ

## ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Յանկացողները զինվում են ՍՄՍԱ, Андреасу Абрамянцу.

1—5 (2.)

ԲԱՑՎԱԾ Է 1891 Թ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

## Տ Ա Ր Ա Ձ

Գեղարուեստական-գրական-երգիծաբանական ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

Առաջիկայ 1891 թ. յունվարի մեկից կը հրատարակվի

Շ ա բ ա թ ը մ ի ա ն գ ա մ

Անշուշտ ամեն պերճախոսությունից վեր է փաստը: Եթե ամիսը մի անգամ հրա-  
տարակվող «Տարազը» փաստահանում ենք հենց երկրորդ տարուց ԾԱԲԱԹԸ ՄԻ ԱՆ-  
ԳԱՄ ՀՐԱՏԱՐԱԿՆԸ, պարզ ապացույց է այն մեծ համակրություն և սիրալիր ընդունե-  
լություն, որ այս կարճ ժամանակամիջոցում մեր ընթերցողներին «Տարազը» արժա-  
նացաւ:

Պատկերազարդ «Տարազը» շաբաթաթերթը մենք խոստանում ենք նկարների կողմից  
մայրաքաղաքներում հրատարակվող շաբաթաթերթերի ճոխությունը հասցնել: Բովանդա-  
կություն կողմից պատկերազարդ «Տարազը» շաբաթաթերթը նոյնպէս ձուլ կը լինի և  
բազմակողմանի: Վիզյական մասը, որ պատկերազարդ «Տարազը» շաբաթաթերթում նկար-  
ների հաւասար առաջին տեղը կը բռնէ, կը տպագրվին մի շարք պատմական և ժամա-  
նակային վեպեր, հանգուցեալ Բաֆֆի, նրա թողած թանգազին ձեռագիրներին, պ.պ.  
Աղայեանի, Պաշտմանի, Լեօի, վ. Փափաղեանի, և ուրիշների:

Պատկերազարդ «Տարազը» շաբաթաթերթը ընդ մի տեսիլ ամեն կերակրի օր այժ-  
մեան «Տարազի» ղերթով իւրաքանչիւր Ն-ը երկու թերթից:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ՏԱՐԱԶ» ԾԱԲԱԹԱԹԵՐԹԻ

ՆՊԱՏԱԿ

Հայ անդամատանում ցանկ գեղեցիկ և բարւոյ  
սերները ու արմատախիւ անկ տղեղ և չար որոնի:

ԳԵՂԱՐՈՒԹՅՈՒՆՔ՝ լինի նա արտայայտված բանա-  
տեղծի վառ շրթերով, հրաշագործ նկարչի վեր-  
ձինով, թէ սիրտ արտիստի վիզազրի գրչով  
«Տարազում» առաջին տեղը պիտի բռնէ, քննա-  
դատություն մեր առօրեայ կեանքի լինի նա ար-  
արտայայտված վեպով, պատմամոլ, ֆելիտոնով  
թէ կատակով «Տարազի» գրական մասը պիտի  
կազմեն:

«Տարազի» մի երկրորդական մասը կը կազմեն  
պատկերներ, նկարներ, տեսարաններ, թէ արդի և  
թէ անցած դարացի, գլխաւորապէս մեր կեանքի  
հայ կինը ամեն շաբաթ «Տարազում» կը գտնէ ևւ-  
րպական նորագոյն կարուձեր, ձեռագործի վե-  
րաբերեալ նկարներ բացատրություններով:

«Տարազը» պատկերազարդ շաբաթաթերթի տարեկան բաժանորդագիրը 6 ռուբլի,  
արտասահմանի համար 7 ռուբլի (20 ֆր.) իսկ «Աղբիւրին» և «Տարազին» միանուագ  
բաժանորդ գրվողը մինչև առաջիկայ դեկտեմբերի 1-ը վճարում է 5 ռուբլի:

Հասցեն՝ Тифлис, редакция еженедельн. иллюстр. журн. «Таразъ» կամ Tiflis (Caucase)  
Rédaction du journal illustré «Taraz».

Խմբագիր հրատ. Տիգրան Նազարեան

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, վարձարձի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ֆ. վերաբուժական (և առանցիկ) սիֆիլիսի և աչքացաւի  
ՐՈՒԿՈՎՍԿԻ—10—11 ֆ. ներքին, երեխայոց և կանանց ց.  
ԿԻՆԻՔԻՇԻ ԻՍԱՀԱԿԵԱՆ—11 1/2—12 ֆ. կանանց և երեխայոց ց.  
ԿԻՆԻՔԻՇԻ ՍՈՒԽԱՐԻՆՍԿԻ—12—12 1/2 ֆ., կանանց և ներքին ց.  
ՊՐՈՏԱՍԵՎԻԶ—12—1 ֆ. ակնաբլի, կոկորդի և քթի ց.  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12 1/2—1 ֆ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱՐՍԻՍԿԻ—5—6 1/2 ֆ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վերաբուժական.  
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ֆ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրաբերական):  
ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ֆ.  
Վճար—50 Կ. Համալսարանի (կոնսիլիումի) համար առանձին  
Հերթակալ բժիշկ—Երեկ. ֆ. 9-ից մինչև առ. ֆ. 7-ը:  
Հիւանդանոցի վերառեսուչ բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Товарищество Промышленниковъ сарпинскихъ издѣлій

ВЪ САРАТОВѢ.

Сезонъ 1891 года.

САРПИНКА

ручного ткачества, собственной выработки самыхъ новѣйшихъ и изящныхъ рисунковъ.  
Продажа оптомъ и въ розницу, пересылка во всѣ города Россіи.  
Образцы Сарпинки выслаются съ 15-го ноября с. г. въ альбомѣ за 42 коп.  
Цѣны и условія по альбому, (перенесены на рускомъ языкѣ).

1—10 (2)

Питатель-  
ный  
Напитокъ

ԿԱԿԱՕ

Թարր նստում է միայն 4 կող-  
բովական պատրաստվելով.

ՄԱԿՈՐ ԵՒ ՄԵՆԿԱՐԱՐ ՓՈՇԻ-  
Աւաճարվում է առողջացողների  
և երեխաների համար.

ԿԻՍՏԻՅ  
Какао  
Блокеръ

Միակ պահեալ արվեստով՝ Բարձրագույն հաստատված դեղատնային արվեստի նման  
կանան ընկերություն մեջ Թիֆլիսում և Բազում:

Լոյս տեսաւ  
վաճառվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում  
**ՄՏԻԻ ՄՇԱԿԸ**  
Խ. Մարտիանի  
Գինը 50 կոպ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ  
Ժողովրդական ընթերցանություն համար  
**ԱՐՆԱԳԻՆ**  
Լէօի:  
Գինը 7 կոպեկ:  
վաճառվում է գրավաճառանոցներում:

Լոյս տեսաւ  
Ժողովրդական ընթերցանություն համար  
**ՊՍՏԻԿ Է ԲԱՅՑ ՉՍՏԻԿ Է**  
վ. Լուսկիլի:  
Գինը 5 կոպեկ:  
Ծախվում է գրավաճառանոցներում:

Լոյս տեսաւ  
Ժողովրդական ընթերցանություն համար  
**ԻՕԼԵՐԱ**  
ԵՒ ՆՐԱ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՒ  
Բժ. Տէր-Գրիգորեանի (Թիֆլիսցի)  
Գինը 5 կոպեկ.

Լոյս տեսաւ  
Ժողովրդական ընթերցանություն համար  
**ԱՅՆՏԵՂ ԵՒ ԱՅՍՏԵՂ**  
Գրեգոր Արծրունու  
Գինը 10 կոպ.

## ԿԵՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Ծախվում է

ՊՐՈՑ. ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆԻ ԳԵՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ, Մոխէս Խորենացու ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
Խորէն Ծ. Վ. Ստեփանէի Թարգմանությունում. գինն է 25 կոպեկ, ճանապարհածախ  
30 կոպեկ: 1—3



ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒԹԻՒՆԻ  
Բժշկական դեղատանից Թոյ  
տրված  
**ՕԼԳԱԿՏՐՈՒՆԻՄ ՆՈՒԴԻԼԻՆԵ**

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿԱՅԻ

Ծախվում է 40 կոպեկով

Գեղարդական Ապրանքների վաճառման կովկասեան ընկերություն մեջ Թիֆ  
սում: 33—52 (Ծ.)

Գլխաւոր պա-  
հետը գորն-  
վում է Թիֆլի-  
սում և Բազ-  
ում Բարձրա-  
գոյն հաստատ-

СЪ ДОЗВОЛЕНІЯ МЕДИЦИНСКАГО ДЕПАРТАМЕНТА  
ПРИВЛЕЧЕНІЮ ПОМАДЫ  
ПОМАДЫ  
EUSENIE  
Benthac-Ries

վաճ ղեղա-  
տպրանքն  
վաճառման  
կանան  
րութեան  
13—50

ԿԵՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԱՄԲ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ՀԵՏԵԻՆԱԼ ԳԱՐԲԵՐԸ

„Начальная книжка для обучения русскому языку, годъ 1, 2-е издание 2-е, сост. Н. Я. Теръ-Акоповъ. Գինն 45 կոպ.

Այս երկրորդ տպագրությունը Սուրբ Էջմիածնի մանաժողովը քննեց և առաջարկ  
ընդունել հայոց ծխական ուսումնարաններում որպէս յարմարագոյն դասագիրք  
ընդու 1, 2 և 3 տարվայ համար:

„Учебникъ русскаго языка для армянскихъ училищъ, годъ 4-й издание 8-е, сост. Н. Я. Теръ-Акоповъ. Գինն 60 կոպ.

„Русское Слово, руководство для армянскихъ училищъ. годъ 1-й издание 9-е, сост. К. Теръ-Давтянцъ. Գինն 50 կոպ.

Վերջիշեալ գրքերը հաւանած և առաջարկված են լուսաւորութեան նախարարութեան  
և Սուրբ Էջմիածնի մանաժողովից որպէս դասագիրք հայոց ծխական ուսումնարաններում  
ի համար:

Նոյն գրավաճառանոցի հրատարակութեամբ ընդ տեսած են և հետեւեալ դասագիրքերը.

„Русскій Писатели въ выборѣ и обработкѣ для школъ“ т. II сост. В. Мартиновскій, издание 2-е. Ծնա 1 руб. 25 коп.

„Собрание примѣровъ для письменнаго исчисления вып. I вычисления числами отъ 1 до 100“ сост. С. Н. Захаровъ, издание 9-е Ծնա 20 Կ.  
(2.) 3—3